

# ՀԱԿՈՒՄՆԵՐ

Դրամա 4 արարուածով

## II ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

Ծքեղ զարդարուած սենեակ. յետեւի կողմը ընդարձակ միջանցք, որ տանում է դէպ դանլիճը. Բեմի եւ միջանցքի ղոները բաց են. Չախ կողմից դրու: Ծրեկոյ է, հիւրասիրութիւն: Դահլիճից տարածում է երաժշտութեան ծայն: Բեմում շարունակ շարժում, անցուղարձ չիւրերը զոյգ-զոյգ զրուցելով զրօնում են միջանցքում; ըեմում, կամ թէ երբեմն անցնելով բեմի վրայով: Վարագոյրը բարձրանալիս հիւրերը ցրուած են զանազան տեղեր: Խոզ աղմուկ, առաջացած խօսակցութիւններից: Բեմի մի կողմում խօսակցում են Նիւա, Հենրիկ եւ Դէորգ: Խսկ Լիզա եւ Լիոնորա զրուցելով գալիս են բեմի առջեւ:

ԼիջԱ. Դու նորութիւն նկատմամ ես:

Լի՛ոնՈՐԱ. Ի՞նչ նորութիւն:

ԼիջԱ. Նիսան այժմ խիստ հետամտում է՝ Գէորգին, ամբողջ երեկոյ նրանից անբաժան է:

Լի՛ոնՈՐԱ. Միթէ կասկածում ես:

ԼիջԱ. Դու ակնկալմամ ես Նիսայից որևէ է հաւատար-մութիւն:

Լի՛ոնՈՐԱ. Ուրեմն նա չէ սիրում Հենրիկին:

ԼիջԱ. Ի հարկէ չէ սիրում, այլապէս տարօրինակ երեսյթ կը լինէր այդ Նիսայի կեանքում: Յանձին Հենրիկին նա ի նկատի ունի ապահով փեսացուի, ուստի և այժմ հակուած է նրան:

Սակայն եթէ երևան եկաւ մի աւելի ապահով, հարուստ փեսայց նա իսկոյն կը թողնէ Հենրիկին: Իսկ Գէորգը հարուստ է:

**Լի՛՛նՈՐԱ.** Դու կարծում ես ուրեմն, որ Նինան այժմ Գէորգին ի նկատի ունի, կամ թէ աշխատում է ձեռք բերել:

**Լի՛՛ՉԱ.** Այդ շատ պարզ է այժմ: Նայիր, տես ահա ինչպէս կրքոտութեամբ է խօսում Գէորգի հետ և հայեացքը նրանից անբաժան: (Ծրջուա, նայում են Նինային, որ աշխոյժ շարժումներով խօսում է Գէորգի հետ, այն ինչ Հենրիկը հանգիստ դիտում է նրան):

**ՄԻ՛ՔԱՅԷԼ.** (Մերձենում է): Ի՞նչ էք դիտում:

**Լի՛՛ՉԱ.** Ես հաւատացած եմ, որ եթէ Գէորգն առաջարկութիւն անէ, Նինան իսկոյն կ'ընդունէ, մերժելով Հենրիկին:

**Լի՛՛ՆՈՐԱ.** Աններելի է Նինային:

**ՄԻ՛ՔԱՅԷԼ.** Անպայման Նինան այժմ չի սիրում Հենրիկին, եթէ առաջ սիրելիս է եղել Դրա փոխարէն նա աշխատում է Գէորգի վրայ աղջեցութիւն ձեռք բերել:

**Լի՛՛ՉԱ.** Մի խօսք, նա գիսայ է ընտրում:

**Պարերի կառավարիչը.** (Բարձրաձայն): Երկրորդ պարը սկսուած է: (Վերցնում է մի դամա ու դուրս գնում դէպի դահլիճ: Հիւրերը սկսում են զոյգ-զոյգ հետեւիլ):

**Գէ՛ՈՐԳ.** Ուրեմն օր. Նինան վաղը ժամանակ չի ունենալ մեզ հետ անցնելու:

**Հենրիկ.** Օրիորդը տրամադրութիւն յայտնեց վաղը ձիո վ զրօսանքի ենել և ես արդէն պատուիրել եմ ամեն ինչ:

**Լիզա,** լիոնորա և **Միքայէլ:** (Մօտենում են խօսակցողներին):

**ՆինԱ.** (Դժգոհութեամբ: Ես ամենաին տրամադր չեմ, մանաւանդ ձիով զրօսնել սկի չեմ սիրում:

**Լի՛՛ՉԱ.** Միթէ:

**Հենրիկ:** Բայց այդ դուք առաջարկեցիք:

**ՆինԱ.** Դուք ցանկանում էիք, ես էլ իմ համաձայնութիւնը տուի: Սակայն այժմ տրամադրութիւնս փոխուել է: (Անհանգիստ շարժումներ է անուան):

**Գէ՛ՈՐԳ.** Կարդղ եմ ձեզ այս վայլսին ինդըել:

**ՆինԱ.** Շնորհակալ եմ: (Վերցնում է Գէորգի թեւը եւ գնում են):

**Հենրիկ.** (Ինքն իրան): Զարսանում եմ:

**Լի՛՛ՉԱ.** Իսկ մենք անպատճառ կ'երթանք:

**ՄԻ՛ՔԱՅԷԼ.** Մենք կ'երթանք ի հարկէ, մանաւանդ որ ձիաները պատուիրած են: Նինան երևի տրամադրութիւն չ'ունի, թէ չէ նա ձիավարութեան մեծ սիրահար է:

**ԼիջԱ.** Պարոն Հենրիկը կը մասնակցէ:

**Հենրիկ.** Ես տրամադրութիւնս չեմ փոխել, վազը ձեղ հետ կը գամ անպատճառ (զնում՝ է դահլիճն):

**ԼիջԱ.** Հասկացմը, Լիոնորա, ինչո՞ւ Նինան այդպէս վարուեց:

**ԼիՌՈՂՐԱ.** Զեմ հասկանում:

**ԼիջԱ.** Որովհետև Գէորգը ձի հեծնել չէ սիրում, ուստի և մեր զրօսանքին մասնակցել չի կարող:

**ՄԻՔԱՅԻԼ.** Նինան սկսում է Գէորգի ճաշակով ապրել, թէ չէ ուրիշ անգամ ձիու անուն լսելիս պարում է:

**ԼիջԱ.** Գէորգից դուրս նա այժմ ոչ ոքի տեսնել չի ուզում և որբան կոպիտ է նա պատասխանում Հենրիկին:

**ԼիՌՈՂՐԱ.** Զարմանում եմ. ընդամենը երկու-երեք օր է ինչ նա Գէորգի հետ ծանօթացել է, միթէ այս կարճ ժամանակում կարող է նրանից այդ աստիճան ազդուել:

**ԼիջԱ.** Ինչո՞ւ անպատճառ ազդուել: Ֆինանսական տեսակտից Գէորգը գերադասում է Հենրիկին, իսկ Նինան բացարձակապէս շեշտում է, որ հարուստ ամուսին է փնտում: Ինչո՞ւ ուրեմն այժմ չ'աշխատել Գէորգի ուշադրութիւնը գրաւելու:

**ՄԻՔԱՅԻԼ.** Որտեղ է Նինան ծանօթացել Գէորգի հետ:

**ԼիջԱ.** Ինքը Հենրիկն է անցեալ երեկոյեան ժողովարանում նրանց ծանօթացրել:

**ՄԻՔԱՅԻԼ.** Ինքն իր ձեռով իրան հակառակորդ է բերել:

**ԼիՌՈՂՐԱ.** Գէորգը Հենրիկի ընկերն է, միթէ նրանք երբ և է չը պիտի ծանօթանային:

**ՄԻՔԱՅԻԼ.** Միրոյ ժամանակ ի՞նչ ընկեր: Ահա ձեղ ընկեր:

**ԼիջԱ.** Այս ամեն պատմութեան մէջ միմիայն Նինան է մեղաւոր և ոչ Գէորգը:

**ՄԻՔԱՅԻԼ.** Մէկը աւելի՞ քան միւսը:

**ԼիՌՈՂՐԱ.** Թերենս դուք իրաւացի էք: Եթէ Գէորգին հաճելի չէ լինէր Նինայի կոկետութիւնը, այդ աստիճան մերձ յարաբերութիւն չէր ստեղծուիլ:

**ՄԻՔԱՅԻԼ.** Ի հարկէ, այդպէս է: Նոյն իսկ նա կարող է Նինային յետ վանել յանուն Հենրիկի սիրոյն: Բայց ինչո՞ւ է լուսն Հենրիկն ու տանում այս ամենը:

**ԼիջԱ.** Երկար չի տեիլ, երկի շուտով նա էլ կը հասկանայ այս ամենը:

**ՄԻՔԱՅԻԼ.** Դադարենք նրանց մասին խօսելուց: Պարել չեմ կամենում, է՛լզա:

**ԼիջԱ. Գնանք:** (Վերցնում է Միջայէլի թեւը եւ դուրս են գնում):

**ԼիՌՈՒՐԱ. (Վենակ):** Նինան այժմ հակուել է Գէորգին. այս ճիշտ իրողութիւն է: Թեթևամիտ ընաւորութեան, թերուս կրթութեան ու դաստիարակութեան հետեանք է սառ Յաճախակի սիրահարութիւնը Նինային այժմ դարձրել է սիրոյ վերաբերմամբ կատարեալ բութ, այնպէս որ այսօր ամուսնութիւնը նրա համար ոչ թէ սիրոյ կապ է, այլ մի դուռ, որ պէտք է տանէ դէպ հարստութեան, ճոխ ու կոմֆորտ կեանքի մի փայլուն ասպարէզ: Ահա թէ ինչու նա կարողանում է մի շարթում մոռանալ Լևոնին, Հենրիկին ընտրելու իրբե աւելի ունեւորի, ապա թողնում նրան հարուստ Գէորգի ուշադրութիւնը գրաւելու: Սա անհատական երեսյթ չէ, սա մեր ժամանակակից հասարակութեան մօրալի արտայայտութիւնն է, մի մօրալ, որ պարզ պնդում է, թէ գոյութեան կուռմ հեշտ ու ապահով կեանք վարելու համար պէտք է ոչնչացնել բոլոր միւս զաղափարները, որոնք այդ ճանապարհին խոչսդու կարող են հանդիսանալ: Մեր կեանքում Նինաների թիւը լեզէօն է, որոնց արմատախիլ անելու համար կարեոր է կրթութեան ամբողջ սիստեմ ներս բերել: (Նայում է սեղանի վրայ թափուած լրագիրները):

**ԼիԷՄՆ. (Մտնում է ըիչ յետոյ):** Կարդամ էք:

**ԼիՌՈՒՐԱ. Աչքի էի անցնում:**

**ԼիԷՄՆ. Դուք պարել թողել էք, անշուշտ կրթուած ճաշակի նկատմամբ:**

**ԼիՌՈՒՐԱ.** Իսկապէս վաղուց է չեմ պարում, սակայն ճաշակի վերագրել չեմ կամենում, քանի որ չը պարելով հանդերձ, մնում եմ հանդիսատես, առանց ձանձրոյթի դիտելով պարողներին:

**ԼիԷՄՆ. Նինայի մասին ի՞նչ կարող էք պատմել, ե՞րբ է նշանագրութիւնը:**

**ԼիՌՈՒՐԱ. Դեռ որոշ չէ, գոնէ ես չը գիտեմ:**

**ԼիԷՄՆ. Քիչ առաջ Հենրիկի հետ էինք, նա այնպիսի տօնով է խօսում, որ իրը Նինայից դեռ դրական պատասխան չէ ստացել: Ի՞նչ որ սասնութիւն է նկատում, դրան վերադիր Հենրիկը շատ դժուարութեամբ էր պատասխանում:**

**ԼիՌՈՒՐԱ.** Ես սկսել եմ կասկածել նրանց կապի վերայ: Նրանք անչափ տարբեր մարդիկ են, միւս կողմից Նինան աշխատում է հարուստ փեսայ գտնել, ուրեմն և անսպասելի չը պիտի լինի, եթէ Գէորգի մօտ Հենրիկը մերժուի:

**ԼիԷՄՆ. Գէորգ: Միթէ՞ նա հետաքրքրում է Նինայով:**

Լի՛ՌՆՈՐԱ. Գոնէ այդպէս է երեռւմ:

Լեհոն. Դժուարանում եմ հաւատալ: Միթէ Գէորգը մտածում է Նինային բաժանել Հենրիկից:

Լի՛ՌՆՈՐԱ. Եթէ Նինան Հենրիկի փոխարէն Գէորգին է ընտրում, այդ գէպքում Գէորգն ազատ է մեղադրանքից, իսկ Հենրիկին մնում է միայն խոհեմութեամբ դիջանել:

Լեհոն. Կրկնակի մեղադրելով Նինային, չի կարելի մոռանալ, որ անպայման Գէորգը նպաստել է իր կողմից Նինայի անհաւատարմութեան: Բայց և աւելացնում եմ, որ Գէորգից նման վարժունք չիմ սպասում:

Լի՛ՌՆՈՐԱ. Այսպէս թէ այնպէս պարզ է այժմ, որ Նինան անչափ հետաքրքրում է Գէորգով և անպատճառ կը մերժէ Հենրիկին եթէ Գէորգն առաջարկութիւն անէ:

Լի՛ՌԱ. (Մ'տնում է): Կարծի եմ մասնակցել:

Լի՛ՌՆՈՐԱ. Նինայի մասին ենք խօսում:

Լեհոն. Իսկ հաստատ է, որ Նինան Հենրիկին խօսք է տուել:

Լի՛ՌԱ. Ի հարկէ. և այնպիսի քաղցր օրեր են անցըել այս մի քանի օրը, որ Նինան եթերումն էր զգում իրան: Գոնէ ինքն այդպէս է ասում:

Լեհոն. Ես այդ օրիորդի մասին սկսում եմ աւելի քան վատ կարծիք կազմել:

Լի՛ՌԱ. Նա այստեղ ոչինչ վատ բան չի գտնում: Նա միայն ամուսին է ընտրում, ինչպէս որ ինքն է ասում:

Լեհոն. Այդ անպատճարենք խալ է. պէտք է նրան յետ կանգնեցնել այդ սովորութիւնից. պէտք է նրան զգուշացնել ոչ միայն յանուն իր պատուի, այլ և յանուն այն մարդկանց քախտաւորութեան, որոնց նա որսալ է աշխատում:

Լի՛ՌՆՈՐԱ. Նրան բան հասկացնել շատ դժուար է: Ի սկզբանէ անտի նա յայտնի է իր անթիւ պատմութիւններով, այդպէս էլ պիտի շարունակուի, մինչև որ մի փառաւոր օր իր ամբողջ զեղիս գոյութեամբ կը զարնուի կեանքի ապառաժին և ջարդ ու փշուր կը լինի:

Լեհոն. Նրան արհամարհելը ոչ մի շահ չկանի. պէտք է ընդհակառակը խնդիրը պարզել և ըստ կարելւոյն շուտ վերջ դնել ամեն անախորժութիւնների: Այլապէս այս ամենը կը բռնկուի մի օր և առաջինը հենց իրան կը սպանէ:

Լի՛ՌԱ. Ինչ կարելի է անել: Նա կը պատասխանէ, որ սիրում է Գէորգին, ուրեմն և հասկանալի պիտի լինի, որ աշխատում է նրան ձեռք բերել:

**Լեհոն.** Իսկ Գէորգին պարզ պիտի լինի, թէ ինչ հաշիւներով է առաջնորդւում Նինան։ Առհասարակ ես Գէորգին ներել չեմ համաձայնուում, քանի որ նա մոռանում է իր ընկեարկան պարտականութիւնը Հենրիկի վերաբերմամբ։

**Լի՛նՈՐԱ.** Թերևս Գէորգը գեռ ըս գիտէ նրանց յարաբերութիւն մասին։

**Լի՛ԶԱ.** Ես ևս հակուած եմ կարծելու, որ եթէ Գէորգն իմանար նրանց յարաբերութեան մասին, անպայման յետ կը մղէր Նինային։ Սակայն ինչո՞ւ Հենրիկը չի ասել դեռ։ Միւս կողմից Գէորգին մեղադրել ես չեմ կամենում։ Միթէ դուք մեղադրում էք Հենրիկին, որի պատճառով դուք մերժուել էք։

**Լեհոն.** Անպայման Հենրիկը մեղաւոր է այն տեսակէտից։ որ նա հետամուել է Նինային ու ստիպել նրան իր դիմաց մոռանալ ինձ։ Սակայն ես անտարբեր եմ այս դէպքում, քանի հաստատ է, որ շուտ թէ ուշ Նինան կը դադարէր, ինձ սիրելց չնորիւ իմ անապահով դրութեան։ Կոմֆորտ կեանքի հակումները այն աստիճան ուժեղ են նրա մէջ, որ միւս ըոլոր զգացմունքները ճնշում ու խոկոյն կուլ են գնում։ Նա անընդունակ է սիրելու, իսկ նրա այդ ձգտումները ապագայ դժբախտութիւններ են խոստանում։ Ահա ինչո՞ւ պնդում եմ, որ պէտք է երկու կողմերին ևս սթափեցնել։

**Լի՛ԶԱ.** Սակայն լաւ գեր կատարած կը լինենք մենք։ Նի՞ն. (Մտնում է)։

**Լի՛նՈՐԱ.** Ահա նա, (Կամաց)։

**Լեհոն.** (Վերէ կենում, ատելութեամբ Նինայի կողմը նայում եւ քայլում դուրս գնալու)։

**Նի՞ն.** (Լեւոնի հետեւից գրգուած)։ Պարոն Լևոն, քառաքավարութիւնը ստիպում է ծանօթներին բարել։

**Լեհոն.** (Կանգ է առնում)։ Ամեն ինչ մեր մէջ այլ ևս վերջացած է։

**Նի՞ն.** Մեր մէջ տեղի ունեցած ամեն պատմութիւնից յետոյ, չէր սպասում այսպիսի վիրաւորանք։

**Լեհոն.** Ես կերծել չեմ կամենում, օրինակ Նինա։

**Նի՞ն.** Ցարգել ծանօթութիւնը կեղծիք չէ ամենակին։

**Լեհոն.** Մեր վերաբերմամբ կատարեալ կեղծիք. (Քնումէ)։

**Նի՞ն.** Զգուելի մարդ։

**Լի՛ԶԱ.** Միթէ խիստ չես, Նինա։

**Նի՞ն.** Ամենակին ոչ։

**Լի՛ԶԱ.** Կարծում եմ Բայց ինձ ներէք։ (Քնումէ)։

**Նի՞ն.** Այս ամենից յետոյ միթէ կարելի է այլ ևս տղամարդկանց հաւատ ընծայել։

**Լի՛՛ՌԱՐԱ. Սակայն դու կատարեալ աւելորդ պահանջներ ևս անում: Ձեր յարաբերութիւնները խզելուց յետոյ այլ ևս ինչ ծանօթութիւն կամ գլխարկի բարեւ:**

**ՆԻ՛ՆԱ. Միթք նա հասարակ պարտականութիւն չէ զգում գոնէ հասարակութեան մէջ ինձ յարգանքով վերաբերուելու: Ի՞նչ կ'ասեն մարդիկ, որոնք մինչև այժմ մեզ միասին են տեսել, երբ այժմ նկատեն մեր այս դժգոհութիւնը:**

**Լի՛՛ՌԱՐԱ. Եթէ հասարակական կարծիքը քեզ համար որևէ նշանակութիւն ունի, այդ դէպքում նման խաղերից վաղուց հեռացած պէտք է լինէիր:**

**ՆԻ՛ՆԱ. Ի՞նչ խաղեր, ես ուղղակի խարուել եմ իմ միամասութիւնից:**

**Լի՛՛ՌԱՐԱ. Միթք կարծում ես ինձ էլ մոլորեցնել, Նի՞նա: ՆԻ՛ՆԱ. Ո՛չ ոքի մոլորեցնել ես չեմ մտածում: Ի՞նչ մեղադրու եմ, եթէ նրան սիրել այլ ևս չեմ կարողանում:**

**Լի՛՛ՌԱՐԱ. Դու նրան սկզբից չես սիրել, այլ անձնատուր ես եղել միմիայն ժամանակաւոր հաճոյքի, ինչպէս անցեալ անգամ ինքդ անձամբ խոստովանում էիր: Իսկ այդ ամենը խաղեր են միմիայն, սիրոյ խաղեր: Վերցնենք հենց Հենրիկի դէպքը: Ինչի՞ համար են այս ամենը: Եթէ դու նրան սիրում ես և խօսք ես տուել, ինչո՞ւ ուրեմն նրան վիրաւորանքներ ես հասցնում, աշխատելով ամենըին էլ ցոյց տալ, որ անտարբեր ես դէպի նա: Կամ եթէ յիշաւի նրան չես սիրում, ինչո՞ւ ուրեմն շարունակում ես կերակրուելնրա համբոյըներով, ինչո՞ւ շարունակում ես նրա ծանօթութիւնը վայելել:**

**ՆԻ՛ՆԱ. Իբրև ջղային, ես հանգիստ տանել չեմ կարողանում, երբ նա հասարակութեան մէջ իրան այսքան մերձ է պահում ինձ: Այլ բան է, եթէ պաշտօնապէս յայտնի լինէր մեր յարաբերութիւնը:**

**Լի՛՛ՌԱՐԱ. Իսկ եթէ ձեր մէջ կապ, համաձայնութիւն կայ, ինչո՞ւ քողարկել կամ գաղտնի պահել: Ո՛չ Նի՞նա, դու այժմ այլ ձգտում ունիս, դու բացարձակապէս հակուած ես Գէորգին:**

**ՆԻ՛ՆԱ. Նու, ինչ կայ որ:**

**Լի՛՛ՌԱՐԱ. Ոչի՞նչ, ի հարկէ. քո հաշիւների համար նոյն խակ շատ լաւ է, միայն զարմանալի է իսկապէս, որ ընդամենը մի շաբթում կարողանում ես կեռնին մերժել, յանուն Հենրիկի սիրոյն, այժմ էլ Հենրիկին թողնել մի երրորդի համար:**

**ՆԻ՛ՆԱ. Հենրիկին ես չեմ թողել:**

**Լի՛՛ՌԱՐԱ. Աւելի վատ: Եթէ այժմ հակուած ես Գէորգին,**

պարտաւոր ես Հենրիկին ազատ թողնել, խոստովանուելով նը-  
րան ամեն ճշմարտութիւն:

ՆԻՆԱ. Սակայն այդ այն ժամանակ սիսիայն, երբ բացար-  
ձակ զգամ, որ Գէորգը իմ մէջ գերազաս է միւսներից:

ԼԻՌՆՈՐԱ. Բայց այդ այնքան պարզ է այժմ քո մէջ, Մի-  
թէ դեռ կասկածում ես:

ՆԻՆԱ. Կասկածում, օ, ոչ! Ես նըրան սիրում եմ, Լիոնորա,  
քեզնից թագանել չեմ կամենում, սիրում եմ նըրան: Սակայն չէ  
որ այս հերիք չէ: Չէ որ փոխադարձ սէր է կարևոր:

ԼԻՌՆՈՐԱ. Եւ այդ բացակայժմ է:

ՆԻՆԱ. Դու ինչ ես կարծում:

ԼԻՌՆՈՐԱ. Որ նա քեզնով խիսա հետաքրքրում է:

ՆԻՆԱ. Ախ. ինձ թւում է թէ նա դէպ ինձ ոչ մի լուրջ  
զգացմունք չի տածում: Ահա ինչո՞ւ այսքան տանջուում եմ:  
Ոչ ոքի համար ես այսչափ չեմ չարչարուել: Մի-մի լոպէ  
թւում է, որ նա ինձ սիրում է, որ ահա կը թեքուի ու կը  
համբուրէ ինձ և ես սկսում եմ դողդողալ կարմրել, երջան-  
կութեամբ լցուել, սակայն նա մնում է լուռ և միշտ տա-  
տանում: Նա կասկածում է Հենրիկի յարաքերութիւնից, ահա  
ինչո՞ւ տատանում է:

ԼԻՌՆՈՐԱ. Ա.ա... Այդ պատճառո՞վ ուրեմն դու այդպէս  
արհամարհանքով ես վերաբերում Հենրիկին, ցոյց տալու Գէոր-  
գին, որ Հենրիկը ոչինչ արժէ քո աշքում, Նու, Նինա:

ՆԻՆԱ. Ի՞նչ անեմ, Լիոնորա: Ես ինձ զսպել այլ ևս չեմ  
կարողանում, Գէորգի ներկայութեամբ մոռանում եմ ամեն ինչ.  
առանց նրան ես անչափ թշուառ եմ: Այժմ միայն գիտեմ ինչ  
է նշանակում սիրել: Նրա դիմաց, նրա շնչի տակ ես կծկում  
եմ, սարսում, այդ ըստէներին պատրաստ եմ նրա համար  
ամբողջ կեանքս զոհելու: Ախ, ինչո՞ւ նա ինձ չի սիրում:

ԼԻՌՆՈՐԱ. Հանդիստ մնա, նա անտարբեր չէ դէպի քեզ:  
ՆԻՆԱ. Դուկարծում ես նա սիրում է ինձ: Ասիր, յոյս տուր:  
ԼԻՌՆՈՐԱ. Նա դեռ երկի ծանօթանում է քո կեանքի հետ:  
ՆԻՆԱ. Իսկ ես լմւ եմ պահում ինձ: Նա գմէն կը մնայ  
ինձնից:

ԼԻՌՆՈՐԱ. Եթէ շարունակես անտեղի վիրաւորանքներ  
հասցնել մարդկանց, հազիւ նա գոհ մնայ:

ՆԻՆԱ. Իսկ այդ յանուն հենց իր սիրոյ եմ անում:

ԼԻՌՆՈՐԱ. Ինչո՞վ երաշխաւորել, որ ապագայումնրա հետ-  
ես նոյնպէս չես վարուիլ:

ՆԻՆԱ. Ա՛խ ոչ! ես նրան սիրում եմ, ես նրան հաւատարիմ կը մնամ: Քեզ խնդրում եմ միայն, Լիոնորա, աշխատել Հենրիկին հեռու պահել, նա մեզ անշափի խանգարում է:

ԼԻՈՆՈՐԱ. Հրաժարւում եմ որ և է դեր յանձն առնել: Թո ծրագիրներում ազատ գործելու համար, ես խորհուրդ եմ տալիս մերժել Հենրիկին:

ՆԻՆԱ. Մերժել նրան հենց այժմ:

ԼԻՈՆՈՐԱ. Նբանից ազատ մնալու ամենալաւ միջոցն է այդ և աւելի՝ պատուաբեր:

ՆԻՆԱ. Մերժել, որ դու նրա հետ մենակ մնաս:

ԼԻՈՆՈՐԱ. Որ դու ազատ մնաս Գէորգի հետ ինչ բնձ է վերաբերում, լրկում եմ քեզ, որ ես Հենրիկից ոչ մի ակընկալութիւն չհնախիմ:

ՆԻՆԱ. Նրան այժմ իսկ մերժել ես չեմ կամենում:

ԼԻՈՆՈՐԱ. Խճչպէս կ'ուզես: Այդ դէպքոմ քեզ զդուշացացնում եմ թողնել Հենրիկին ծաղրելը Գէորգի ներկայութիւն: Այդ անպատճիւ վարք է: Դու կարող ես ազատ մէկին անձնատուր լինել առանց մի երրորդին անուանարկելու:

ՆԻՆԱ. Ի զուր ես գրգռուում:

ԼԻՈՆՈՐԱ. Նու, քեզ միայն յիշեցնում եմ: (Թնում է):

ՆԻՆԱ. (Բարկացած նայում է Լիոնորայի ետևից, ապա նստում գահաւորակին): Հա, հա: Ես շատ լաւ գիտեմ իմ դերը և ոչ մի սպառնալիք չի կարող ինձ երկիւղ աղդել: Հենրիկին այժմ սերժելը կը լինի ամենամեծ, յիմարութիւն: Նրան դեռ պէտք է փաղաքելով պահել, մինչև Գէորգի հետ յարաբերութիւնս կը որոշուի: Դուքէ Գէորգը ոչ մի լուրջ մտադրութիւն իմ վերաբերմամբ չ'ունի, ինչու ուրիմն թողնել Հենրիկին: Ո՞չ, այդ աստիճան սիամիտ լինել աններելի է: (Փառուզա): Իսկ այս անիրաւ Գէորգը: Օ՛, նա անգութ է կատարեալ: Միթէ նա չի նկատում իմ տանջանքը: Կեանքում շատ մարդկանց եմ պատահել, բոլոր ծանօթներիս իսկոյն ընկածել ու ստիպել իմ առջևս ծուսկ իշնել, սակայն Գէորգը... դեռ տատանւում է: Հարստութիւնը նրան խիստ հպարտ է դարձրել, սակայն ես նիման եմ, նրան ևս կ'ընկճեմ: Անկարելիք բան է, նա պէտք է ինձ սիրէ:

ՀԵՆՐԻԿ. (Ներս է մտնում տիսուր ու ծանր քայլերով:)

ՆԻՆԱ. Դու ես, Հենրիկ: Ինչու այդպէս տիսուր:

ՀԵՆՐԻԿ. Ես չեմ կարողանում բացատրել այս ամենը: Ամբողջ երեկոյ անցնում ես ինձնից հեռու, միշտ ինձ դէմ խիստ տոն բանեցնելով: Ինչու ինչ է պատահել որ:

ՆԻՆԱ. Խսկապէս դու լուրջ վիրաւորուած ես: Մոռանմաւ  
ես որ ես զղային եմ: Կամ ի՞նչ մի լուրջ վիրաւորանք: Ես  
ցանկանում եմ միայն նկատելի չը դարձնել մեր յարաբերու-  
թիւնը, աւելորդ խօսակցութիւններից խուսափելունպատակով:  
ՀԵՆՐԻԿ. Բայց և ինչու թագոնել, ինչու կեղծել:

ՆԻՆԱ. Ես նկատում եմ քո մէջ խանդոտութիւն, սակայն  
թող քեզ յայտնի լինի, որ ես Գէորգին նայում եմ իրու երե-  
խայի, ի զուր ենթագրութիւններ մի անիլ:

ՀԵՆՐԻԿ. Խանդոտութիւնը սիրոյ առհաւատչեայ է, մի  
մոռացիր այդ:

ՆԻՆԱ. Քեզնից բաժան ես ևս շատ անհանգիստ եմ, մի-  
թէ չես նկատում:

ՀԵՆՐԻԿ. Այդ դէպքում դառնանք տուն:

ՆԻՆԱ. Այդ աւելի քան անյարմար է:

ՀԵՆՐԻԿ. Տարօրինակ կատարեալ:

ՆԻՆԱ. Ոչինչ տարօրինակ բան չը կայ: Մօտ արի և նե-  
րեր ինձ:

ՀԵՆՐԻԿ. (Մօտենում է գրկելու) Այս ամենը այլ ևս չի  
կրկնուիլ, չէ:

ՆԻՆԱ. (Դուսափելով, մազերը քոնած:) Սպասիր, զգիյն  
մազերս քանդեցիր:

ՀԵՆՐԻԿ. Ո՛հ, քո այդ մազերի սարքը միշտ թանգ արժէ  
քեզ համար:

ՆԻՆԱ. Մի նեղանար, Հենրիկ, չէ որ այստեղ, այսքան  
հասարակութիւնն մէջ անյարմար է....:

ՀԵՆՐԻԿ. Այս, իրաւացի ես. կանայք պարկեշտութիւնը  
իրու դէմքի գեղեցիկ քող են գործ ածում:

ՆԻՆԱ. Նորից վիրաւորում ես կանանց:

ՀԵՆՐԻԿ. Ես արտայայտում եմ իմ կարծիքը:

ՆԻՆԱ. Եւ միշտ անպայման իմ կարծիքներին հակառակ:  
Միթէ յիրաւի դա սէր է նշանակում: Ի՞նչպէս ես դու ինձ սի-  
րում, երբ ամեն մի խօսքիս հակառակում ես: Դոնէ ուրիշների  
մօտ լուրի, եթէ չես կամենում ինձ պաշտպանել, ինձ հետ  
համաձայնուել:

ՀԵՆՐԻԿ. Խիստ ու անարդար պահանջներ ես անում,  
Նինա: Ինչպէս համաձայնուեմ քո մի շարք կարծիքների հետ,  
որոնց ես կատարեալ սխալ եմ գտնում, ապացուցանելով մա-  
տեմատիկօրէն:

ՆԻՆԱ. Գոնէ ուրիշների մօտ այդպէս մի վարուիր, թէ  
չէ ի՞նչ կը կարծեն մարդիկ իմ մասին:

**ՀԵՆՐԻԿ.** Ո՞չ ոք քո մասին վատ կարծիք կազմել չե՞ն կարդի թայց այժմ թողնենք այս ամենը և գնանք դահլիճ. առանձնութիւնը կրկնակի վատ է արամագրում:

**ՆԻՆԱ.** Ինձ ներիք, ես կամենում եմ փոքր ինչ հանգստանալ, մանաւանդ երկար պարելուց յետոյ քաղց եմ զգում:

**ՀԵՆՐԻԿ.** Կարելի է իսկոյն բան պատուիրել:

**ՆԻՆԱ.** Շնորհակալ եմ, չի ուզիլ. շուտով ընթրիքի կը հրաւիրեն: Դու այժմ ինձ թող մենակ, ինչդրում եմ, ես կամենում հանգստանալ:

**ՀԵՆՐԻԿ.** Ինչպէս քեզ հաճելի է: (Թնուամ է:)

**ՆԻՆԱ.** Ո՞հ, ձանձրալի պատմութիւններ: Գէորգ եմ հառաջում, Հենրիկն է գալիս: Ո՞չ, Գէորգը անտարբեր է դէպի ինձ, այսքան ժամանակ ես բացակայ եմ դահլիճից, և նա չի գալիս ինձ փնտուելու: Սիրտս կտրատում է. ուրիշ ինչ է մնում ինձ անելու: Խօսել հետը: Ո՞չ ոչ. ես պէտք է ինձ հպարտ պահեմ: Կինը ինչքան հեռու մնայ, տղամարդը աւելի կը սկսի հետամտել: Այ, օրինակ Հենրիկն աւելի է սկսել ինձ հետամտել. նա ինձ շատ է սիրում. շատ լաւ աղայ է, ափսոս...

**ԳԷՈՐԳ.** (Մտնում է:)

**ՆԻՆԱ.** (Ինքնիրան): Վերջապէս:

**ԳԷՈՐԳ.** Դուք այստեղ էք, օրինարդ Նինա. ամբողջ ժամանակ ձեզ եմ փնտում: Ինչժամ էք մեզ թողել:

**ՆԻՆԱ.** Երկար պարելուց յոզնել եմ. եկալ հանգստանալու:

**ԳԷՈՐԳ.** Բայց ինչժամ մենակ առանձնացած. միթէ ձեզ ուղեկցել մենք չենք կարող:

**ՆԻՆԱ.** Շնորհակալ եմ: Մտածեցի, թերևս ձեզ աւելորդ նեղութիւն պատճառէր այդ:

**ԳԷՈՐԳ.** Ինչքան անարդար էք: Միթէ տրամադիր էք կարծելու, որ սի ուրիշը այստեղ աւելի է հետաքրքրում ինձ, քան դուք:

**ՆԻՆԱ.** Ինչժամ անարդար:

**ԳԷՈՐԳ.** Ուրեմն դուք կարծիւմ էք, որ ձեզնից դուքս ես զբաղուած իմ ուրիշով:

**ՆԻՆԱ.** Սակայն ի՞նչ մեծ յանցանք, եթէ սիրումներից մէկը ձեր ուշադրութիւնը գրաւել կարողանայ:

**ԳԷՈՐԳ.** Եւ այդ սկսակը դնուք էք:

**ՆԻՆԱ.** Նու, նու:

**ԳԷՈՐԳ.** Ես խօսում եմ անկեղծ և եթէ ասում եմ, որ այստեղ բացի ձեզնից ուրիշ հչոք ինձ չէ հետաքրքրում, շեշ-

տում եմ այդ բառի ամենանուրբ իմաստով։ Ես չեմ կամեանում ձեզնից թագցնել, ոչ էլ քողարկուել, որ ձեր ներկայութիւնը հրճուանքով եմ որոնում։

ՆԻՆԱ. Ես ձեզ լսում եմ բաւականութեամբ։

ԳԵՂՈՐԴ. Ինձ հաճելի է աեսնել, որ դուք իմ այս խորը համակրանքին անտարբերութեամբ չէք պատասխանում։ Ես այնպիսի բնաւորութիւն ունիմ, որ անչափ հեշտութեամբ հակւում եմ նրանց, որոնք եռանդ ունեն իրանցով զրադեցնելու, և ընդհակառակը շատ շուրջ ձանձրանում եմ, երբ կանայք կամենում եմ պաշտուել, իրանք մնալով անտարբեր։ Դրանք նման են մարմարեայ արձանի, դէպի որը հրապուրուելով, մարդ իսկոյն յետ է քաշւում, ցուրտ զգալով նրանց դէմքից բուրող սառնութիւնից։

ՆԻՆԱ. Կաւ էք ուսումնասիրելքնքոյշների ազդեցութիւնը։

ԳԵՂՈՐԴ. Այդ կարեոր է ամեն մի երիտասարդի, որ հակուած է քնքոյշների շըջանում իր ժամերը անցնել։ Իսկ ես, ինչպէս տեսնեմ էք, քնքոյշների հասարակութիւն մեծ հաճոյքով եմ փառնոում, մանաւանդ այժմ, երբ մէկը զերադասութիւն է ձեռք բերել։

ՆԻՆԱ. Տեսնենք որքան երկար կը տեկի այդ գերադասութիւնը։

ԳԵՂՈՐԴ. Այս ազդեցութիւնը, որ դուք ունիք ինձ վրայ, աւելի քան խոր է, կարող էք հաւաստիանալ,

ՆԻՆԱ. Ցուսով եմ ձեր ծանօթութեամբ ես մի վստահելի բարեկամ ունեմ ձեռք բերած։

ՀԵՆՐԻԿ. (Մտնում է):

ԳԵՂՈՐԴ. Զգացուած եմ։

ՀԵՆՐԻԿ. Ընթրիքի հրաւէր արդէն եղել է. կարմղ եմ օրիորդ Նինային սեղանատուն առաջնորդել։

ՆԻՆԱ. Շնորհակալ եմ։ Այսպէս ուշ ընթրել սովոր չեմ։ ՀԵՆՐԻԿ. Բայց...ը...ը...։

ՆԻՆԱ. (Ընդհատելով). Սիրալիք էք, շնորհակալ եմ, Դուք կարմղ էք ինձ չը սպասել։

ՀԵՆՐԻԿ. (Հեռանում է դժգոհութեամբ.)

ՆԻՆԱ. Օ՛, վաս քան է, մէկին տանել չը կարողանալ։

ԳԵՂՈՐԴ. Հենրիկին։ Նա իմ ամենալաւ ընկերն է, օրինրդ Նինա, ես կարող եմ ձեզ երաշխաւորել։

ՆԻՆԱ. ?!

ԳԵՂՈՐԴ. Անշուշտ ձեր մէջ մի դժգոհութիւն է տեղի ունեցել։

ՆԻՆԱ. Թողնենք։ (Վեր է կենում)։

**ԳԵՂԻՐԴ.** Բայց մենք կարող ենք ընթրիքի գնալ, թէկուզ հենց հասարակութեան մէջ լինելու համար:

**ՆԵԽԱ. Շնորհակալ եմ. գնանք:** (Վերցնում է Գէորգի թեւը եւ զեռում են):

**ՀԵՆՐԻԿ.** (Մտնում է փոքր յետոյ): Ինձ բացարձակապէս մերժեց Գէորգի հետ լինելու համար: Ի՞նչ է նշանակում այս: Դադարէլ է նա ինձ սիրել: Հաղիւ մի շաբաթ է ինչ անձնատուր ենք եղել Ամուրի հշանառութեան: Եւ ես յիրաւի որ երջանիկ էի նրա քաղցր շնչի առջև: Իսկ այժմ... Երկրի հարթ կրծքի վրայ կատարեալ սովորական դէպք կը լինի, եթէ Նինան դադարէ ինձ սիրել: Ես այս ընդունում եմ սակայն և դժուարանում հաշտուել այդ չար մտքի, գուցէ և արդէն իրական դէպքի հետ: Այժմ, հենց այժմ, այս դաժան մտքերի տակ ես աւելի պարզ գիտեմ, որքան սիրուա եմ նրան. այժմ աւելի եմ գիտակցում, ինչ չափով տեղ ունի բռնած նա իմ սրտում: Ես սկսում հմ աւելի անհանգստանալ: Նա այժմ պարզ հակուած է Գէորգին, թէկ ծածկել է աշխատում: Պէտք է պարզել այս ամենը, այլապէս կրկնակի անպատճարեր է խառնուել նրանց յարաբերութեան մէջ: Օ՛, կի՞ն, զու սարսափելի ես: Սակայն յիրաւի ինքս ինձ զսպել այլ ես անոյժ եմ: Ո՛չ: Հաւաքեմ վերջին կտոր ոյժերս ու կոռում, զսպեմ ինձ: (ընկցրով զարկում է սեղանին, ապա ճակատը սեղմում ու խորհում: Կարճ պատզա):

**ՄԻՔԱՅԻԼ.** Ի՞նչ ես ճգնաւում, մարդ Աստղւծոյ: Ուր է կորել քո՝ ըժիշկ մարդու սառնարիւնութիւնը:

**ՀԵՆՐԻԿ.** Մաղրելի է թերես:

**ՄԻՔԱՅԻԼ.** Միթէ նեցելի է քեզ մի աղջկայ պատճառով այսպէս վրդովուել: Կամ վերջապէս էլ ինչ պատմութիւններ: Միրում ես նրան, - ամուսնացիր, իսկ եթէ նա մերժում է, — էլ ինչու քարշ գալ նրա ետևից, կամ ինչու գիմնազիստի պէս խանդուել:

**ՀԵՆՐԻԿ.** Ես չեմ կարողանում բացատրել ինձ այս հանելուկը:

**ՄԻՔԱՅԻԼ.** Խօսիր հետը, հարցրու իրան, Նինային:

**ՀԵՆՐԻԿ.** Պնդնամ է, որ ես իր աշքում չեմ կորցրել իմ արժէքը, որ նա ինձնից դուրս ոչ որով չի հետաքրքրուում:

**ՄԻՔԱՅԻԼ.** Արդեօք այդ ճիշտ է:

**ՀԵՆՐԻԿ.** Չը կայ ինձ համար ոչի՞նչ սարսափելի, քան խարուել, կեղծուել: Եւ եթէ յիրաւի Նինան այդպէս է վարում ինձ հետ, նշանակում է ամեն ինչ վերջացած է մեր մէջ:

**ՄԻՔԱՅԻԼ.** Դրական ելքը նրանից բացատրութիւն պա-

հանջելն է: Թող այդ մռայլը, մանաւանդ թէ այժմ; երբ ես  
հոգու արտակարգ տրամադրութեան մէջ եմ:

ՀԵՆՐԻԿ. Տեսնում եմ շատ ոգևորուած ես. ի՞նչ կայ,

ՄԻՔԱՅԵԼ. Երկի դէմքից գուշակէլ կարող ես:

ՀԵՆՐԻԿ. Դէմքիդ արտայայտութեան մասին գու գեռ շատ  
մեծ կարծիքի ես: Մի մոռացիր, որ երիտասարդական անզուսպ  
կեանքը ջնջում է ամեն յստակութիւն և մարդու դէմքը դառ-  
նում է այլ ևս իսկապէս որ անարտայայտիչ:

ՄԻՔԱՅԵԼ. Դուք բժիշկներդ մարդու աւելի էք յուսահատ  
դարձնում. իսկ քո վիլխոփայութիւնը ես սկի տասնել չը կա-  
րողացայ: Հենց ամեն քայլափոխում աչքն ես կոխում իմ դրու-  
թիւնը: Քեզ մանաւանդ այդ ներել չի կարելի, քանի որ քնզ,  
քան մի ուրիշին, աւելի մօտ ծանօթ պիտի լինին ժամանակա-  
կից այն պայմանները, որոնց մէջ ապրում է տղամարդը:

ՀԵՆՐԻԿ. Թող, թող այդ հին պատմութիւնները, արդա-  
րանալու հարկ չը կայ: Ասա, ի՞նչ է պատահել:

ՄԻՔԱՅԵԼ. Թէկուզ անարդար մարդ ես, բայց լուրջ խօ-  
սենք: Ես նշանաւում եմ էլզայի հետ:

ՀԵՆՐԻԿ. (Ցատկում է): Ի՞նչ: Դու առաջարկութիւն  
ես արել:

ՄԻՔԱՅԵԼ. Եւ նա ուրախութեամբ ընդունել է:

ՀԵՆՐԻԿ. Թշուառական,

(Մտնում են Ալեքսանդր. Յովիաննէս, Գաբրիէլ:)

ՄԻՔԱՅԵԼ. Մի չարանար:

ՀԵՆՐԻԿ. Թշուառական, լսում ես: (Դնում է:)

ԳԱԲՐԻՒԵԼ. Ահա Միքայէլը այստեղ է:

ՄԻՔԱՅԵԼ. Ի՞նչ է:

ԳԱԲՐԻՒԵԼ. Խաղալ ենք կամենում. չես մասնակցիլ:

ՄԻՔԱՅԵԼ. Կարելի է:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Հազիւ ազատուեցինք քնքոյշների հա-  
սարակութիւնից: Ի՞նչ էք խսքուելնրանց գլխին. չը ձանձրացմք:  
ՅՈՎՀԱՆՆԵՍ. Իսկապէս յոգնեցուցիչ է մեծ հասարակու-  
թեան մէջ լինել:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Շատապէք կանաչ սեղան պատուիրել:

ԳԱԲՐԻՒԵԼ. Խաղանք, խաղանք: (Կանչում է ծառայալին,  
որ պատրաստում է թղթախաղի սեղանը:)

ՅՈՎՀԱՆՆԵՍ. (Միքայէլին): Ի՞նչ է, բժիշկը նստել իր  
ցման է ողբում:

ԱԼԵՔՍԱՆԴՐ. Ես կարծում էի օրիորդ Նինան բժշկին  
խօսք է տուել, բայց բանից դուրս է գալիս Գէորգին է նա  
ընտրել:

**ՄԻՔԱՅԵԼ.** Հարցը հենց նրա մէջ է, որ նիսան բժիշկին խօսք է տուել բայց այժմ փոշմանել է:

**ԱԼՔԹՍԱՆԴՐ.** Իսկ բժիշկը շատ մեծ յիմարն է, եթէ այդ պատճառով տիրում է: Ի՞նչ է կորցրել որ, նրանից էլ լաւ հարսնացու կարող է գտնել:

**ԳԱԲՐԻՒԵԼ.** Այդպէս դատել չի կարելի, պարոններ. գուցէ մարդը սիրում է նիսային:

**ՄԻՔԱՅԵԼ.** Սիրում է դժբախտաբար:

**ԱԼՔԹՍԱՆԴՐ.** Նու, ի՞նչ անենք այժմ: Հենրիկը նիսային է սիրում, իսկ նիսան Գէորգին:

**ՅՈՎՃԱՆՆԵՍ.** Բայց Գէորգը կը սխալուի, եթէ նիսային առաջարկութիւն անէ:

**ԱԼՔԹՍԱՆԴՐ.** Ես ևս կը պնդեմ, որ թէ Գէորգը և թէ Հենրիկը անհամեմատ բարձր են կանգնած նիսայից. Նա ի՞նչ կին կարող է լինել որ:

**ԳԱԲՐԻՒԵԼ.** Զեմ ուզում ես այդ աստիճան խիստ լինել: Ինչքան էլ մեծ կարծիքի չեմ օրիորդ նիսայի մասին, սակայն տրամադրիր եմ կարծելու, որ նա հաւատարիմ կին կը լինի, եթէ միայն սիրէ ամուսնուն:

**ՄԻՔԱՅԵԼ.** Եթէ միայն սիրէ, այս: Թէ խաչը իմն է, զօրութիւնը ես գիտեմ: Նա սիրում է միայն հարուստ գրպանը:

**ԳԱԲՐԻՒԵԼ.** Թողէք, լաւ. Նստենք մեր գործին:

**ԲՈԼՈՐԸ.** Նստենք: (Սկսում են խաղալ: Փոքը յետոյ մտնում են Լետն և Լիոնորա):

**ԼԵՒՈՆ.** Հենրիկը խիստ վիրաւորուած է. նկատելի է նրա վրդովմունքը:

**ԼԻՌՆՈՐԸ.** Նիսան պարզօրէն խոստովանուեց, որ Գէորգի սիրոյն արժանանալու համար ոչինչ չի կարող ինսայիւ: Կարծում է որ Գէորգն իսկոյն առաջարկութիւն կ'անէ, եթէ համոզուի, որ Հենրիկի ու նիսայի միջև ոչ մի կապ չը կայ: Հասկանալի է, որ հենց այս պատճառով նիսան կոպիտ է վարւում: Հենրիկի հետ:

**ԼԵՒՈՆ.** Այդ աստիճան այլասեռնեմ: Եւ այն Հենրիկի վերաբերմամբ: Սակայն ի՞նչ է մտածում Գէորգը. միթէ նա ընկերական պարտականութիւն չի զգում Հենրիկի վերաբերմամբ:

**ԼԻՌՆՈՐԸ.** Ի՞նչ կարող է կարծել Գէորգը: Նա կարող է միայն ուրախանալ արժանանալով նիսայի փոխադարձ սիրավրութեան:

**ԼԵՒՈՆ.** Այդ գէպքում թող նիսան նախ մերժէ Հենրիկին:

**Լի՛ՌՆՈՐԱ.** Ես շեշտեցի այդ մասին, բայց Նինան միայն ժպտով պատասխանեց:

**Լեհի՛ՌՆ.** Զեմ հասկանում:

**Լի՛ՌՆՈՐԱ.** Հասկանալ գդրւար չէ: Մինչև Գէորգից գրական խօսք լսելը, նա չի կամենում Հենրիկին մերժել:

**Լեհի՛ՌՆ.** Բայց չէ որ այս ամեն կոպտութիւնը կը ստիպէ Հենրիկին երես շրջել Նինայից:

**Լի՛ՌՆՈՐԱ.** Հաւատացած եղէք, որ Գէորգի ներկայութեամբ Հենրիկի հետ այդպէս կոպիտ վերաբերուելով, Նինան առանձին ժամանակ կը գտնէ Հենրիկին շահելու բնըոյշ փաղաքշանքներով: Նինան իր կոտրածը կոծկելու շատ լաւ չնորդ ունի, անհանգիստ մի լինիք:

**Լեհի՛ՌՆ.** Ես կարենոր եմ գտնում իրերի դրութիւնը հենց այժմ իսկ պարզել:

**Լի՛ՌՆՈՐԱ.** Կարենոր է թերես, սակայն առ այժմ ես հրաժարում եմ խառնուել այս աղմուկի մէջ: Բայց և այնպէս ես կրկին կը փորձեմ Նինայի հետ խօսել, գուցէ կարելի լինի նրան զգուշացնել:

**Լեհի՛ՌՆ.** Այդ կարենոր է:

**Լի՛ՌՆՈՐԱ.** Ես Նինային պնդեցի Հենրիկին անուանարկելը թողնել Գէորգի սիրոյն արժանանալու նպատակով:

**Լեհի՛ՌՆ.** Այդ նոյն իսկ Գէորգի վերաբերմամբ անպատուաբեր է: Նա անգիտակցարար այստեղ վատ դեր է կատարում:

**Լի՛ՌԱ.** (Մունում՝ է): Դուք նկատում եք ինչպէս է սիրախօսում Նինան Գէորգի հետ: Այնպէս պինդ կապել է նրան, որ կարծես նրա գրկում լինի: Եթոյ պիտի պարծենայ, որ Գէորգն իրան հանգիստ չէ տալիս:

**Լեհի՛ՌՆ.** Սակայն ճիշտ է որ Գէորգը նրանով հետաքրքրուում է:

**Լի՛ՌԱ.** Ի՞նչ մի զարմանալի բան: Երբ մի կին ժամերով աչքերը յառէ մի տղամարդու և աշխատէ ցոյց տալ, ներազդել, որ նրան է միայն ցանկանում, հասկանալի է, որ տղամարդն էլ անտարբեր մնալ չի կարող:

**Լեհի՛ՌՆ.** Դուք կարծում էք ուրեմն, որ Գէորգն առանձին հետաքրքրութիւն չի տածում գէպի Նինան:

**Լի՛ՌԱ.** Գէորգը մի մարդ է, որ ամենախոր սիրոյ ժամանակ անգամ իր հաշիւները ի նկատի ունի: Գուցէ այժմ նա Նինային հաւանում է, սակայն հաղիւ թէ երկար ժամանակ Նինան նրա աչքում գին ունենայ: Բայց ես չեմ կարողանում ներել այդ Հենրիկին: Այս ամենից յետոյ ինչպէս է նա դեռ շարունակում իր ծանօթութիւնը Նինայի հետ:

Լի՛՛ՌԱ. Ես կարծում եմ նա կը թողնէ Նինային, նախ բան Նինան կը մերժէ նրան:

Լի՛՛ՌԱ. Եւ ես աւելացնում եմ, որ Գէորգը եւս կը թողնէ Նինային: Ես Գէորգին շատ լաւ գիտեմ, նրա և Նինայի մէջ ոչ մի կապ լինել չի կարող: Այդ մի փոքրիկ հրապոյր է, որ Գէորգին ստիպում է Նինայի դիմաց ժամանակ: Իսկ այս միմիայն Նինայի վարպետութեան պէտք է վերագրել: Նա գրաւելու երկնային շնորհ ունի խսկապէս, կարող է պարծենալ:

Լի՛՛ՌԱ. Ցաւալի է: (Գնում է):

Լի՛՛ՌԱ. Իսկ սա երկի վիրաւորւում է լսելով այս ամենը Նինայի մասին:

Լի՛՛ՌԱ. Նա ինքը աւելի խիստ է դատափետում Նինային:

Լի՛՛ՌԱ. Երկի Նինային դեռ սիրում է:

Լի՛՛ՌԱ. Անշուշտ Նինան նրա յիշողութեան մէջ դեռ շատ մեծ տեղ ունի բանած:

Լի՛՛ՌԱ. Թերեւս մտածում է նորից ձեռք բերել:

Լի՛՛ՌԱ. Ամենանին: Միթէ այդ քեզ պարզ չէ:

Լի՛՛ՌԱ. Իսկ ի՞նչպէս կը վերջանայ Հենրիկի հետ, ի՞նչ ես կարծում:

Լի՛՛ՌԱ. Նինան պարտաւոր է նրան մերժել: Բացի այդ, ես կարծում եմ Հենրիկն ինքը կը շտապէ մերժել:

Լի՛՛ՌԱ. Այդ շատ հրաշալի կը լինի: Պէտք է Նինային պատժել:

Լի՛՛ՌԱ. Ես Նինային ասացի, որ միայն Գէորգով զբաղուելու համար շատ նպատակայարմար է Հենրիկին այժմ իսկ մերժել, բայց նա չի համաձայնուում ի հարկէ: Դրան վերադիր շեշտում է, որ ես խօսում եմ յանուն իս հաշիների:

Լի՛՛ՌԱ. Ի՞նչպէս:

Լի՛՛ՌԱ. Որ իբր թէ ես հետաքրքրուում եմ Հենրիկով:

Լի՛՛ՌԱ. Նու, յիմար աղջիկ:

Լի՛՛ՌԱ. Այս ամենը ձանձրացըել է ինձ խսկապէս, սակայն ես չեմ կամենում խուսափել, թերեւս յաջողուի Նինային յետ կանգնեցնել այս անպատուարեր խաղերից:

Լի՛՛ՌԱ. Ասում ես Նինան կարծում է, թէ դու դէպի Հենրիկը թուլութիւն ես տածում:

Լի՛՛ՌԱ. Մի քանի անգամ նա շեշտել է:

Լի՛՛ՌԱ. Իսկ դու, եթէ ներում ես ինձ հետաքրքրուել, սիրում ես Գրիգորին:

Լի՛՛ՌԱ. (Ժանըրութեամբ) Ես դէպի նա, խոր համա-

կրանք եմ տածում: Այս բանի տարի է մենք համարեա անբաժան ենք անցնում: Միասին գնացել ենք բարձրագոյն ուսման, միասին սովորում ենք, միասին պարապում, հասկանալի է ուրեմն, աւելի բան մտերիմ ենք:

ԼիջԱ. Նա իսկապէս շատ համակրելի տղայ է, քեզ կատարեալ համապատասխան: Եւ դուք կամումնանաք անպայման, չե՞:

Լի՛ՌՆՈՐԱ. Շմտ ես հետաքրքրուում:

ԼիջԱ. Նու Ի՞նչ կայ որ: Ի՞նձ կարժղ ես հօ պատմել:

Լի՛ՌՆՈՐԱ. Կը պատմեմ, միայն հչ այսօր:

ՄԻՔԱՅԵԼ. (Թողնում է իսաղո ու մօտենում): Դու ընդդէմ չե՞ս, էլզա, որ ես փոքր ինչ խաղում եմ:

ԼիջԱ. Միայն երկար չը խաղաս:

Լի՛ՌՆՈՐԱ. (Դուրս է գնում):

ՄԻՔԱՅԵԼ. Պարոնների համար ձանձրալի է, ուստի խնդրեցին խաղաղ: Չե՞ս կամենում նայել:

ԼիջԱ. Եթէ չեմ խանդարիլ:

ՄԻՔԱՅԵԼ. Օ, հչ, (Վերցնում է թեւը եւ մերձենում են թղթախաղի սեղանին): Պարոնները ընդդէմ չեն լինիւ, կարծում եմ, եթէ օրիորդը կամենում է նայել:

Զայներ: Օ՛, օ՛, խնդրենք: (Աթոռներ են առաջարկում):

ԼիջԱ. Շնորհակալ եմ: (Դիտում է իսաղո):

ՆԻՆԱ. (ՄՄտնում է կարճ պատզայից յետոյ, քաշում լիզայի թեւից, բեմի առջեւ բերում) Ի՞նչ էիք խօսում Լիոնորայի հետ:

ԼիջԱ. Ամեն ինչի մասին:

ՆԻՆԱ. Գիտեմ, Լիոնորան չի կարողանում հաշտ աչքով նայել, որ Հենրիկն ինձ սիրում է, ուստի եկել, պահանջում է Հենրիկին թողնել, նրան մերժել:

ԼիջԱ. Թիւրիմաց ենթալրութիւններ ես անում. Լիոնորան սիրում է բոլորովին այլ մարդու:

ՆԻՆԱ. Ո՞ւմ:

ԼիջԱ. Հարցըրու իրան:

ՆԻՆԱ. Ամենաին չեմ հետաքրքրուում. միայն չեմ հասկանու, ի՞նչ է ուրեմն նա կամենում:

ԼիջԱ. Ոչինչ վատ բան չի կամենում Լիոնորան. նա պնդում է միայն Հենրիկին թողնել, եթէ այժմ սիրում ես Գէորգին: Ես ևս նոյն կարծիքի եմ: Ինչու խարել, երբ այլ ևս Հենրիկը քեզ համար գին չունի:

ՆԻՆԱ. Ես չեմ խարում: Ես Հենրիկին համակրում եմ, սիրում:

**ԼիջԱ.** Իսկ ես շեշտում եմ, որ դու ոչ ոքի չես սիրում և չես սիրել. դրա փոխարէն Գէորգը համապատասխանում է քո հաշիւներին և դու այժմ հակուած ես նրան:

**ՆինԱ.** Սակայն այդ չի նշանակում, թէ Հենրիկին թողնել պէտք է:

**ԼիջԱ.** Ես կարծում եմ դու պարտաւոր ես Հենրիկին տուած խօսքդ յետ վերցնել ու նրան ազատ թողնել. կամ թէ դադարել բացի Հենրիկից ուրիշներին ես հետամտելուց:

**ՆինԱ.** Դու ես ի՞նչ է պատահել ձեզ:

**ԼիջԱ.** Ինչու ես զարմանում, Նինա: Միթէ ինքդ չես կարողանում նկատել, ի՞նչ վատ դեր ես խաղում. Հենրիկին խօսք ես տուել, ապա այժմ, մի քանի օրից յետոյ միայն, հետամտում մի ուրիշին. Ինչե՞ր չէիր պատմում Հենրիկի հետ անցրած այս մի քանի օրերի մասին. Միթէ ամեն յոյզեր չքացան այդքան շուտ: Ես չեմ ուզում կարծել, որ դու Հենրիկին սիրել ես, նոյնպէս և չեմ կամենում հաւատալ, որ Գէորգին սիրում ես կամ կը սիրես:

**ՆինԱ.** Ի՞ զուր ես պնդում:

**ԼիջԱ.** Զէ, Նինա. Մենք հօ կարող ենք անկեղծ խօսել: Դու Գէորգին հակուել ես միայն նրա հարստութեան պատճառով, այլապէս Գէորգը չունի արտակարգ առաւելութիւններ, որի դիմաց կարողանար Հենրիկը նսւազուել, կամ մի շաբթում մոռացութեան արուել:

**ՆինԱ.** Ճաշակի ինդիր է: Գէորգը իմ աչքում անչափ բարձր է կանգնած և երբ մյժմ նա դէպ ինձ այս աստիճան խոր համակրանք է տածում, ինչու պէտք է ես խոյս տամ:

**ԼիջԱ.** Նորից պարծենկոտութիւն, Նինա: Ես այդ չը սիրեցի քո մէջ: Ես կարող եմ ամեն փաստերով ցոյց տալ, որ ամբողջ ժամանակ դու ես նրան հակուած, նրան ձգտում, նրան զբաղեցնում, այն ինչ նա մնում է միայն սիրալիր կաւալէր:

**ՆինԱ.** Կարծնաւ ես:

**ԼիջԱ.** Երկի նա այժմ փոքր ինչ թուլութիւն է տածում դէպի քեզ, սակայն ես կամենում եմ միայն շեշտել այն իրականութեան վրայ, որ առաջինը դու ես սկսում միշտ և որ դու տղամարդկանց խելքահան անելու շնորհը ունիս:

**ՆինԱ.** Դու կամենում ես միմիայն ինձ վիրաւորել:

**ԼիջԱ.** Քեզ վիրաւորելու ամենսին տրամադրութիւն չունիմ:

Գէօրգի ու Լի՛նՈՐԾ: (Մտնում են խօսակցելով:)

**ՆինԱ.** Թողնեմք, լաւ: (Մտնողներին) Դուք երկի պարմ էիք:

ԳԵՂՈՐԴ. Դժբախտաբար օրիորդ Լիոնորան յողնած է:  
ՆԻՆԱ. Լիոնորան քիչ է պարում. սակաւապահանջ մարդ  
է և բաւականանում է շատ շուտ:

ԼԻԶԱ. Սակաւապահանջ լինելը առիթ է տալիս շատ  
թիւրիւմացութիւններից ու աւելորդ անախորժութիւններից  
խուսափել:

ԳԵՂՈՐԴ. Օրիորդը կարող է պարծենալ, այդ գովելի՛ բնա-  
տորութիւն ունի:

ԼԻՌՆՈՐԴԱ. Շնորհակալ եմ. սակայն խնդրում եմ, դադա-  
րէք իս մասին խօսել:

ՆԻՆԱ. Բայց ինչո՞ւ սահմանափակուել, երբ կարելի է  
աւելին ձեռք բերել:

ԳԵՂՈՐԴ. Աւելորդութիւններից խուսափել և սահմանափա-  
կուել միմիայն ամենաանհրաժեշտութիւնը, զրական ու պա-  
տուաբնոր քայլ է:

ՆԻՆԱ. Ես այդ չեմ ընդունում. պատուաբնոր ապրելու հա-  
մար կարեոր չէ խուսափել ընդարձակ կեանքից: Դրան վերա-  
դիր ինձ կատարեալ կեղծիք է թւում, երբ պնդում են, որ քչով  
բաւականանալը անձնական հաճոյք է պատճառում: Այդ շեշ-  
տում են մարդիկ, որոնք ստիպուած են բաւականանալ  
եղածով:

ԼԻԶԱ. Խիստ ես դատում, նինա:

ՆԻՆԱ. Խօսք լիոնորայի մասին չէ, ի՞նարկէ: Նա շատ  
բան կարող է անել, եթէ ազատուի միայն մի քանի յիմար  
իդէալներից:

ԼԻԶԱ. Ի՞նչ նպատակով: Միմիայն աւելորդութիւններով  
ծանրաբեռնուելու համմր:

ՆԻՆԱ. Կեանքի մէջ աւելի՛ հաճոյքներ վաստակելու,  
կեանքից աւելի՛ օգտուելու նպատակով: Վերջապէս ինչո՞ւ  
խուսափել:

(Հիւրերը սկսում են հաւաքուել:)

ԼԻՌՆՈՐԴԱ. Ես չեմ խուսափում. ճգնաւոր լինելու ամենին  
ցանկութիւն չունեմ, սակայն և չեմ կամենում շրջապատուել  
մի խումբ վառվուն հայեացքներով, որոնք ոչ մի ազդեցութիւն  
կամ նշանակութիւն չունին ինձ համար: Ի՞նչի՞ս է պէտք զարդ  
դառնալ մի խմբի, որոնց շրջանում իմ ներքին աշխարհը չի  
ձայնելու, և ոչ էլ ներդաշնակելու իմ արտաքին վարքին:

ՆԻՆԱ. Թէկուզ հենց ժամանակաւոր հաճոյքի համար:

ԼԻԶԱ. Ժամանակաւոր հաճոյք:

ԼԻՌՆՈՐԴԱ. Աւելորդ եռանդ սպառել չեմ կամենում:

ԳԵՂԻՐԴ. Հրաշալի է, գեղեցիկ արտայայտուած:  
(Ժառան մասուցանում է խմիչք:)

ԳԵՂԻՐԴ. Այս բաժակները ամենայարմար ժամանակ ստացանք, երբ կարող ենք նուիրել յանուն այն գիտակցութեան, որ այդպէս որոշ ու դրական է արտայայտում ձեր մէջ, օրիորդ Լիոնորա:

ԼԻՌՆՈՐԴ. Ճնշւում եմ առատ գովասանքների տակ:

ԼԻՌՆ. Լիոնորա, քո կենացը, Ուրախ եմ, որ երոպական կրթութիւնը այդպէս ուժեղ է խօսում քո մէջ:

ԼԻՌՆՈՐԴ. Խսկապէս անյարմար դրութեան մէջ եմ գտնուում:

ԳԵՂԻՐԴ. (Բաժակը խփելով Լիոնորայի բաժակին): Ուսէք և ցոյց տուէք, որ կինն էլ ընդունակ է Ալմա-մատերի բարձունքները մագլցելու հասարակութեան կրթական ղեկը ամենից առաջ կրթուած մայրերի ձեռքին է, մեզ այժմ ամենից շատ կրթուած կանայք են կարեռ:

ՆԻՆԱ. Այս կողմը նայէք:

(Խօսողները շրջուում, նայում են. Թուղթ խաղացողները վառած ըենեղիկտինի բաժակն երը բարձրացրել են եւ իշար կպցնուած:)

ՀԵՆՐԻԿ. (Բաժակը ծեռին մօտենում է նինային): Ես կամենում եմ այս բաժակը ձեր առողջութեան նուիրել, օրիորդ Նինա, Թոյլ տուէք ձեր բաժակին կպչել: (Կամենում է բաժակին զարնել):

ՆԻՆԱ. (Խուսափելով) Այդ հին սովորութիւնը ձեզ դեռ ոգեսրում է:

ՀԵՆՐԻԿ. (Ինքն իրան) Զեմ հասկանում: (Կամենում է հեռանալ, Գէորգը թեմից քաշում է:)

ԳԵՂԻՐԴ. Ըսկեր, խմենք մեր ուսանող կանանց կենացը, որոնց ներկայացուցիչը մեր մէջ օրիորդ Լիոնորան է:

ՀԵՆՐԻԿ. Կնոջ մէջ կայ մի ամբողջ էստեափիկա, իսկ երբ կինը միացնում է իր մէջ և բանականութիւն, նա այլ ես կատարեալ է: Ձեր կենացը: (Բաժակները զարնում են. Նինան նոյնապէս զարնում է Գէորգի հետ):

ԱԱՅՆԵՐ. Կեցցէ կինը:

ՀԵՆՐԻԿ. Օրիորդ Նինան այժմ չի խուսափում բաժակներ զարնելու հին սովորութիւնից օգտուել:

ՆԻՆԱ. Ա՛հ: (Շրջուում է:)

ԳԵՂԻՐԴ. Թող, Հենրիկ: (մի կողմը): Զգոյշ, օրիորդը աւելի քան ջղային է:

ՀԵՆՐԻԿ. Աւելի զսպել ինձ անկարող եմ: Դժգոհու-

թեամբ քայլուա է, բաժակը գետնին զարնում՝ ու դուրս գնում։  
Շարժում՝ Թողնում են թուղթ խաղալը, Հիւթերից՝ մի քա-  
նիսը դուրս են գնում, մի քանիսը խմբում։)

ՆԻՆԱ. Ցիմար, անքաղաքավարի։

ԼԻԶԱ. Թող, հասարակութեան մէջ ես։

ՆԻՆԱ. Ո՛, անտանելի մարդիկ։

ԳԷՈՐԳ, Հանգստացէք, օրիորդ Նինա։

ՆԻՆԱ. Խնչպէս հանգստանալ, այս աստիճան կոպիտ վի-  
րաւորանք։ Օ՛, գլուխս... ես թոյլ եմ...»

ԼԻԶԱ. Թող, Նինա։

ԼԻՌՆՈՐԱ. Զապիր քեզ։

ՆԻՆԱ. Ես թոյլ եմ, ջուր տուէք, օգնեցէք, (ընկնում Է-  
գէորգի գիրկը։ Շարժում։)

(ՎԱՐԱԳՈՅՑ)։

ՅՈ ԲՈԶԻԱՆ.

(Կը շարունակուի)